ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012թ. դեկտեմբերի 21 թիվ 119 - Ա

ԱԶԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<թ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի N 136-Ն որոշման պահանջները և << Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի N 2 որոշումը և Ա.Ղուկասյանի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. 2012 թվականի դեկտեմբերի 21-ից Ազատ Սամվելի Ղուկասյանին նշանակել <<Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:
2. Աշխատավարձը՝ << Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաստիքացուցակով սահմանված կարգով:

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ